

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.1

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ  
*/քննության հարցերի պատասխաններ/*

Մարտ 2020թ.

## ԲԱԺԻՆ Ա. Պատասխաններ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	զ
2	բ
3	ա
4	դ
5	ա
6	զ
7	բ
8	ա
9	դ
10	դ
11	բ
12	զ
13	ա
14	դ
15	բ
16	զ
17	ա
18	բ
19	դ
20	ա
21	զ
22	բ
23	ա
24	դ
25	զ

**Հարցը, պատասխանի ճիշտ տարբերակը և իրավական հիմքը**

**1. Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն՝**

զ/ փակ բաժնետիրական ընկերության այլ բաժնետերերը, իսկ եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109-րդ հոդված, 1-ին մաս.*

*1. Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերն այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն:*

*Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի:*

**2. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է՝**

բ/ բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 96-րդ հոդված, 1-ին մաս, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մաս.*

*1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով սահմանված քանակը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: (...)*

*6. Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: (...)*

**3. Իրավաբանական անձի լուծարման դեպքում առաջին հերթին բավարարվում են՝**

ա/ լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդված, 1-ին մաս.*

*1. Իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝*

*առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.*

երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.

երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

չորրորդ հերթին մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.

հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.

վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

#### **4. Ստորն թվարկվածներից ո՞րը քաղաքացիական իրավունքի օբյեկտ չէ.**

դ/ դեպքերն ու իրադարձությունները:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդված.*

*Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝*

- 1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.*
- 2) աշխատանքները և ծառայությունները.*
- 3) տեղեկատվությունը.*
- 4) մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն).*
- 5) ոչ նյութական բարիքները:*

#### **5. Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է համարվում, եթե՝**

ա/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդված, 1-ին մաս.*

*1. Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:*

#### **6. Անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմություն ուժով սեփականության իրավունքը կարող է ծագել, եթե՝**

գ/ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդված, 1-ին մաս.*

1. Քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

**7. Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ո՞ր դեպքերում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի առանձնացող սեփականատերը կարող է մյուս մասնակիցներից պահանջել վճարել իր բաժնի արժեքը.**

բ/ եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդված, 3-րդ մաս, 2-րդ պարբերություն.*

3. (...) Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

**8. Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի՝**

ա/ ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդված, 1-ին մաս.*

1. Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

**9. Մտորև թվարկված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

դ/ քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող գործարքները պետք է կնքվեն հասարակ գրավոր ձևով:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 297-րդ հոդված, 1-ին մաս.*

1. Բացառությամբ նոտարական վավերացում պահանջող գործարքների, հասարակ գրավոր ձևով պետք է կնքվեն՝

1) իրավաբանական անձանց՝ միմյանց միջև և քաղաքացիների հետ գործարքները.

2) քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ անկախ գումարի չափից, գործարքները:

**10. Կեղծ՝ առօրինակ է համարվում այն գործարքը, որը՝**

դ/ կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդված, 1-ին մաս.*

*1. Կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առօրինակ է:*

**11. Համապարտ պարտականությունը պարտապաններից մեկի կողմից լրիվ կատարվելու դեպքում մնացած պարտապաններին՝**

բ/ ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդված, 1-ին մաս.*

*1. Պարտապաններից մեկի կողմից համապարտ պարտականությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:*

**12. Եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին (պահանջի զիջման դեպքում), ապա.**

գ/ նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը. ընդ որում, այդ դեպքում պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդված, 3-րդ մաս.*

*3. Եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին, ապա նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը: Այդ դեպքում պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը:*

**13. Գողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել՝**

ա/ միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդված, 2-րդ մաս.*

*2. Գողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:*

**14. Եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով, ապա ճանապարհին գտնվող ապրանքի վաճառքի դեպքում դրա պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը՝**

դ/ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից անցնում է գնորդին:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 475-րդ հոդված, 2-րդ մաս.*

*2. Ճանապարհին գտնվող ապրանքի վաճառքի դեպքում դրա պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկն անցնում է գնորդին առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ նման պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով:*

**15. Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականությունը խախտելու դեպքում, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ստորև թվարկված իրավունքներից ո՞րը չունի վարձակալը՝**

բ/ կատարել պայմանագրով չնախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ չձագած հիմնական վերանորոգումը և վարձակալից պահանջել վերանորոգման արժեքը հաշվարկել հետագա բոլոր վարձավճարների հաշվին:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 618-րդ հոդված, 1-ին մաս, 3-րդ պարբերություն.*

*1. (...) Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականության խախտումը վարձակալին իրավունք է տալիս իր ընտրությամբ՝*

*1) կատարել պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ձագած հիմնական վերանորոգում և վարձակալից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.*

*2) պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.*

*3) պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:*

**16. Հանձնարարության պայմանագրով ո՞ր դեպքում հանձնակատարը (այն անձը, որը կատարում է հանձնարարությունը) իրավունք ունի շեղվել հանձնարարողի ցուցումներից.**

գ/ այն դեպքում, երբ գործի հանգամանքներով դա անհրաժեշտ է ի շահ հանձնարարողի, և հանձնակատարը չի կարողացել նախապես հարցում անել հանձնարարողին կամ ողջամիտ ժամկետում չի ստացել իր հարցման պատասխանը:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 784-րդ հոդված, 2-րդ մաս.*

*2. Հանձնակատարն իրավունք ունի շեղվել հանձնարարողի ցուցումներից, եթե գործի հանգամանքներով դա անհրաժեշտ է ի շահ հանձնարարողի, և հանձնակատարը չի կարողացել նախապես հարցում անել հանձնարարողին կամ ողջամիտ ժամկետում չի ստացել իր հարցման պատասխանը (...):*

**17. Բանկային ավանդի պայմանագրով քաղաքացիների ավանդների վերադարձն այն բանկի կողմից, որի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի կամ բաժնեմասերի հիսուն տոկոսից ավելին պատկանում է Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին երաշխավորվում է նաև վերջիններին՝**

ա/ սուբսիդիար պատասխանատվությամբ:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 908-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ պարբերություն.

2. Քաղաքացիների ավանդների վերադարձն այն բանկի կողմից, որի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի կամ բաժնեմասերի հիսուն տոկոսից ավելին պատկանում է Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին, սույն օրենսգրքի 415 հոդվածով նախատեսված կարգով երաշխավորվում է նաև վերջիններիս սուբսիդիար պատասխանատվությամբ:

**18. Գրավի պայմանագրում պետք է նշվեն՝**

բ/ կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 234-րդ հոդված, 2-րդ մաս.

2. Գրավի պայմանագրում պետք է նշվեն կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը (...):

**19. Իրավաբանական անձը կամ քաղաքացին իր աշխատողի կողմից պատճառված վնասը՝**

դ/ հատուցում է, եթե այն պատճառվել է աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդված, 1-ին մաս.

1. Իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս պատճառված վնասը:

**20. Եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա՝**

ա/ պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդված, 5-րդ մաս.

5. Եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում սույն հոդվածով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

**21. ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝**

գ/ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված, 3-րդ մաս.

3. Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ:

**22. Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը չի արգելվում.**

բ/ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակույզվելու դեպքում:

**Commented [A1]:** Այս հարցի պատասխանի հիմքը ոչ միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի նշված հոդվածն է, այլ և 109-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդված, 1-ին մաս.

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադրվող հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադրվելի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադրվելի մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի:

**23. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է՝**

ա/ աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդված, 1-ին մաս.

1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

**24. Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին.**

դ/ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և

աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

*Հինք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդված, 2-րդ մաս.*

2. Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

**25. Ներքոնշվածներից ո՞րը վարչական վարույթում չի բնորոշում առավելագույնի սկզբունքը.**

զ/ արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

*Հինք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված.*

1. Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

2. Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

3. Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված:

## ԲԱԺԻՆ Բ. Պատասխաններ

### Խնդիր 1.

#### Պատասխան /հարց 1/

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

Նույն օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով: Վկաների ցուցմունքների միջոցով սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով փոխառության պայմանագրի վիճարկում չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է խաբեության, բռնության, սպառնալիքի, փոխառուի ներկայացուցչի և փոխատուի չարամիտ համաձայնությամբ կամ այլ ծանր հանգամանքների բերումով: Եթե փոխառության պայմանագիրը սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե դրամը կամ այլ գույքը փոխառուն փոխատուից ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով, պայմանագիրը կնքված է համարվում ստացված քանակի գումարի կամ գույքի չափով:

Նույն օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն (պարտապանը) իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Եթե գրավի առարկայի բռնագանձման ընթացքը կասեցնելու որոշումից հետո դատարանը որոշում է կայացրել գրավառուի հնարավոր վնասների հատուցման համար պահանջվող ապահովումը տրամադրելու վերաբերյալ, ապա գրավատուի (պարտապանի) կողմից գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար տրամադրվող ապահովումը պետք է համարժեք լինի գրավառուի հնարավոր վնասների արժեքին, բայց չպետք է գերազանցի գրավի առարկայի արժեքը: Այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է գրանցման (այդ թվում՝ պետական գրանցման), գրավառուն մինչև գրավի բռնագանձման գործընթացն սկսելը, ինչպես նաև գրավի բռնագանձման գործընթացը դադարեցնելու կամ ավարտվելու դեպքում պարտավոր է այդ մասին պատշաճ ձևով ծանուցել նաև գրանցում իրականացնող մարմնին:

Բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ

քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար:

Բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին հանձնելուց երկու ամիս հետո գրավատուն քաղաքացիական օրենսգրքի ուժով իրավունք ունի դրա 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավատուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավատուն կարող է իրացնել գրավի առարկան մինչև սույն պարբերությամբ նախատեսված երկու ամիսը լրանալը, եթե պարտապանը և գրավատուն (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) բռնագանձման ծանուցումն ստանալուց հետո սույն օրենսգրքի 20.1-ին գլխով սահմանված կարգով գրավոր համաձայնություն են տվել գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ: Մինչև բռնագանձման ծանուցում ստանալը գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ տրված համաձայնությունն առ ոչինչ է: Գրավատուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Տվյալ դեպքում Փոխառուն իրավունք ունի դիմելու դատարան և «անփողության հիմքով» վիճարկելու Փոխառության պայմանագիրը: Նման պարագայում Փոխառության պայմանագիրը կհամարվի կնքված միայն 400.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ, իսկ մնացյալ 100.000 ԱՄՆ դոլարը վճարելու պարտականություն Փոխառուն չի կրելու այն պարզ պատճառով, քանի որ 500.000 ԱՄՆ դոլար փաստացիորեն չի ստացել: Բացի այդ, արտադատական կարգով բռնագանձման կարգավորումները ակնհայտորեն հակասում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումներին, քանի որ ի սկզբանե Փոխառուն իր համաձայնությունն է տվել օրենքով ամրագրված երկամսյա ժամկետի կրճատման վերաբերյալ, ինչը գործող օրենսդրության ուժով առջինչ է: Երկամսյա ժամկետի կրճատումը հնարավոր է բացառապես այն դեպքում, երբ գրավատուն՝ Փոխառուն **բռնագանձման ծանուցումը ստանալուց հետո** տար իր գրավոր համաձայնությունը ավելի կարճ ժամկետում գրավի առարկաների նկատմամբ բռնագանձում տարածելու և դրանով պայմանավորված իրացնելու համար:

Իր հերթին, Փոխառուի պահանջները 400.000 ԱՄՆ դոլար և տոկոսները վճարելու մասով իրավաչափ են, սակայն գրավի առարկաների նկատմամբ բռնագանձում տարածելու համար վերջինս պարտավոր է սպասել երկու ամիս:

## **Պատասխան /հարց 2/**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ գրավատուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

Նույն օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավատուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավատուին կամ գրավատուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ գույքը հանդիսանում է հաջորդող գրավի առարկա, ի լրումն սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանների, նոր գրավառուն իրավասու է բռնագանձելու և իրացնելու գրավի առարկան՝ բացառապես սույն օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն (պարտապանը) իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Եթե գրավի առարկայի բռնագանձման ընթացքը կասեցնելու որոշումից հետո դատարանը որոշում է կայացրել գրավառուի հնարավոր վնասների հատուցման համար պահանջվող ապահովումը տրամադրելու վերաբերյալ, ապա գրավատուի (պարտապանի) կողմից գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար տրամադրվող ապահովումը պետք է համարժեք լինի գրավառուի հնարավոր վնասների արժեքին, բայց չպետք է գերազանցի գրավի առարկայի արժեքը: Այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է գրանցման (այդ թվում՝ պետական գրանցման), գրավառուն մինչև գրավի բռնագանձման գործընթացն սկսելը, ինչպես նաև գրավի բռնագանձման գործընթացը դադարեցնելու կամ ավարտվելու դեպքում պարտավոր է այդ մասին պատշաճ ձևով ծանուցել նաև գրանցում իրականացնող մարմնին:

Բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար:

Բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավառուն կարող է իրացնել գրավի առարկան մինչև սույն պարբերությամբ նախատեսված երկու ամիսը լրանալը, եթե պարտապանը և գրավատուն (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) բռնագանձման ծանուցումն ստանալուց հետո սույն օրենսգրքի 20.1-ին գլխով սահմանված կարգով գրավոր համաձայնություն են տվել գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ: Մինչև բռնագանձման ծանուցում ստանալը գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ տրված համաձայնությունն առ ոչինչ է: Գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Նույն օրենսգրքի 249.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 249 հոդվածի 1-ին կետում նշված համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Նույն օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով: Նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ (բացառությամբ սույն օրենսգրքի 252.1-ին հոդվածով նախատեսված դեպքի) կարող է սահմանվել գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավ դրված գույքի՝ օրենքով սահմանված կարգով իրացման (վաճառքի) ընթացքում, եթե աճուրդը չկայացած է համարվել աճուրդի ընթացքում որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով, գրավառուն յոթ օրվա ընթացքում իրավունք ունի պահանջել գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերը: Եթե գրավ դրված գույքի՝ տվյալ պահին ձևավորված գինն ավելի է գրավով ապահովված պահանջի և գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերի հանրագումարից, ապա գրավառուն պարտավոր է գրավատուին փոխհատուցել տարբերությունը, հակառակ դեպքում գրավառուն իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության և 2-րդ կետի կանոնները չեն կիրառվում հարկադիր կատարման ծառայության կողմից գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) նկատմամբ:

Նույն օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագիրը ենթադրվում է անտոկոս՝ դրանում ուղղակիորեն այլ բան նախատեսված չլինելու դեպքում, եթե՝

1) քաղաքացիների միջև փոխառության պայմանագիրը կնքված է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարով և այն կապված չէ կողմերից որևէ մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ.

2) փոխառուին պայմանագրով հանձնվել է ոչ թե դրամ, այլ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույք:

Նույն օրենսգրքի 885-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

## **Խնդիր 2**

### **Պատասխան /հարց 1/**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպության լուծարման կամ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ մինչև աշխատանքային պայմանագրերը լուծելը, ազատվող աշխատողների թվաքանակի մասին տվյալները (ըստ մասնագիտությունների և սեռատարիքային կազմի) ներկայացնել զբաղվածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին և աշխատողների ներկայացուցչին, եթե նախատեսվում է երկու ամսվա ընթացքում աշխատանքից ազատել աշխատողների ընդհանուր թվի ավելի քան տասը տոկոսը, սակայն 10 աշխատողից ոչ պակաս (զանգվածային ազատումներ):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Նույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին և 111-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

Վերոգրյալ հոդվածների և խնդրի փաստական հանգամանքների համադրությունից ակնհայտ է դառնում, որ Ընկերությունը իրականում խախտել է գործող օրենսդրական կարգավորումները, մասնավորապես, հանքում տեղի ունեցած փլուզումների հետևանքով աշխատանքային պայմանագրերի լուծումը վերջինս պետք է իրականացնէր՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը, ընդ որում՝ առնվազն երկու ամիս ծանուցում ուղարկելու միջոցով: Այնուհանդերձ հաշվի առնելով այն, որ ծանուցումների նվազագույն ժամկետները պահպանված չեն, ուստիև ըստ գործող օրենսդրության Ընկերությունը պարտավոր էր աշխատակիցներին տրամադրել օրենքով սահմանված տուժանքը: Ավելին՝

Ընկերության գործողությունների ապօրինությունը դրսևորվում է նաև նրանում, որ վերջինս համապատասխան աշխատակիցներին չի ներկայացրել նրանց մասնագիտական պատրաստվածությանը, կատարած աշխատանքին, առողջական վիճակին համապատասխանող այլ աշխատանք (նույնիսկ չի նշել այդպիսի աշխատանքի բացակայության մասին), ուստիև այս մասով ևս առկա են խախտումներ:

Բացի այդ, հաշվի առնելով աշխատանքից ազատվող աշխատողների ընդհանուր քանակը՝ Ընկերությունը կրում էր նաև զբաղվածության լիազոր մարմին համապատասխան տեղեկություններ տրամադրելու պարտականություն ևս (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 116-րդ հոդված):

## **Պատասխան /հարց 2/**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսունհինգ տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:

2. Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում:

3. Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝

Նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում գործատուն պարտավոր է գրավոր ծանուցել իր մոտ մինչև մեկ տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, մեկից մինչև հինգ տարի աշխատողին՝ 35 օր առաջ, հինգից մինչև տասը տարի աշխատողին՝ 42 օր առաջ, տասից մինչև տասնհինգ տարի աշխատողին՝ 49 օր առաջ, տասնհինգ տարուց ավելի աշխատողին՝ 60 օր առաջ:

Կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված ծանուցման ժամկետների համեմատ ավելի երկար ժամկետներ:

2. Նույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին և 111-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

3. Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ նշվում են՝

1) աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը, իսկ աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ նաև պաշտոնի անվանումը, աշխատավարձի չափը կամ այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին:

2) աշխատանքից ազատելու տարին, ամիսը, ամսաթիվը:

4. Նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամանակահատվածներում նոր աշխատանք փնտրելու համար գործատուն պետք է աշխատողին տրամադրի ազատ ժամանակ: Տրամադրվող ժամանակի տևողությունը չի կարող պակաս լինել ծանուցման ժամանակահատվածում ներառվող աշխատաժամանակի տասը տոկոսից: Աշխատանք փնտրելու համար ազատ ժամանակը տրամադրվում է աշխատողի առաջարկած ժամանակացույցով: Այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի միջին աշխատավարձը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը:

5. Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի ժամանակ, և գործատուն չի լուծել պայմանագիրը: Այդ ժամկետում չեն հաշվարկվում աշխատողի արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածները:

### Խնդիր 3

#### Պատասխան /Հարց 1/.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժինը վաճառողը պարտավոր է իր բաժինը երրորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել բաժնային սեփականության մյուս մասնակիցներին՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բաժինը գնելու նախապատվության իրավունքը չի կարող զիջվել:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի կանոնները կիրառվում են նաև բաժինը փոխանակության պայմանագրով օտարելիս:

Վկայակոչված իրավական նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ եղբայրներ՝ Պետրոսի, Պողոսի, Մարտիրոսի պահանջները կարող են իրավաչափ լինել միայն **Գագիկի** մասով, քանի որ վերջինս իրավունք չունի զիջելու իր նախապատվության իրավունքը մեկ այլ անձի: Ինչ վերաբերում է Ղուկասի կողմից իր բաժնեմասը վաճառելուն, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է բաժնային սեփականության բոլոր մասնակիցների նախապատվության իրավունքը բաժնեմասի վաճառքի պարագայում՝ բացառություն նախատեսելով միայն այն դեպքերի համար, երբ վաճառքն իրականացվում է հրապարակային սակարկություններով: Տվյալ դեպքում ինչպես բխում է խնդրի փաստական հանգամանքներից Ղուկասն իր բաժնեմասը վաճառել է հրապարակային սակարկությունների միջոցով, ուստի չի գործել մյուս համասեփականատերերի գնելու նախապատվության իրավունքը:

**Commented [A2]:** Փնել եմ «կարող են», քանի որ խնդրի պայմանում եղբայրների վրդովու թյ ան պաճառը Պու կաթի բաժնեմասի օտարու մն է: Գագիկի հետկապկան ինտիքը կախիտը վերանորոգու մն է, իսկ ինտրի պայ մանի վերջին սպրբերու թյ ու նն ավել ի շու տ մտայրու թյ ու ն է:

#### Պատասխան /հարց 2/

Սեփականության իրավունքի դադարման ընդհանուր հիմքերը նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-288-րդ հոդվածներով: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝

- 1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդված 281).
- 2) օտարվում է այն գույքը, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (հոդված 282).
- 3) սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հոդված 218).
- 4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (հոդված 284).
- 5) կատարվում է ռեկվիզիցիա (հոդված 285).
- 6) կատարվում է բռնագրավում (հոդված 288).
- 7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հոդվածներ).

8) գույքն օտարվում է՝ սույն օրենսգրքի 197 հոդվածի 4-րդ կետով, 208 և 220 հոդվածներով նախատեսված դեպքերում:

Նշված կարգավորումից հետևում է, որ օրենքով նախատեսվում են սեփականության իրավունքի դադարման կամավոր և հարկադիր հիմքեր: Ընդ որում, սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, իր գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու և իր գույքը ոչնչացնելու հիմքերը սեփականության իրավունքի դադարման կամավոր հիմքերն են: Իսկ 279-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ թվարկված են սեփականության իրավունքի դադարման հարկադիր հիմքերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, իսկ նույն օրենսգրքի 275 հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ գույքը հետ չպահանջելով: Նույն օրենսգրքի 275 հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների սեփականատերը հայտնի չլինելու դեպքում դրանք ներմուծելու պահից մեկ տարի լրանալը հիմք է սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը ճանաչելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականատիրոջ պարտավորություններով նրան պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով գույքը կարող է առգրավվել դատարանի վճռի հիման վրա, եթե բռնագանձում տարածելու այլ կարգ նախատեսված չէ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցել է այնպիսի գույք, որը սեփականության իրավունքի ծագման պահին օրենքի ուժով չէր կարող նրան պատկանել, սեփականատերն այդ գույքը պետք է օտարի դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

Նշված սեփականության իրավունքի հարկադիր դադարման հիմքը գույքը չօտարելու պարագայում երաշխավորվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա դատարանի վճռով հարկադիր կարգով վաճառելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ օրենքի համաձայն՝ առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեքների սեփականատերը դրանք պահում է անտնտեսվար, ինչը սպառնում է դրանց նշանակության կորստին, նման արժեքները դատարանի վճռով կարող են վերցվել սեփականատիրոջից՝ պետության կողմից դրանց գինը հատուցելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ, վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության՝ դրա արժեքը վճարելու պայմանով (ռեկվիզիցիա):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 286-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից սեփականության իրավունքը դադարեցնող օրենքն ընդունելու դեպքում դրա հետևանքով սեփականատիրոջը պատճառված վնասները, այդ թվում՝ գույքի արժեքը, հատուցում է պետությունը: Վնասների հատուցման մասին վեճերը լուծում է դատարանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց առգրավվել դատավճռով՝ որպես հանցագործության համար պատժամիջոց (բռնագրավում):

#### **Խնդիր 4.**

##### **Պատասխան.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարման կետանց թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է կրում կետանցով պատճառված վնասների և կետանցի ժամանակ պատահաբար առաջացած կատարման անհնարինության հետևանքների համար:

Խնդրի փաստական հանգամանքներից հետևում է, որ Պատվիրատուի և Գնորդի հարաբերություններում վերջինս իրավունք չունի՝ որպես պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմք ու պատասխանատվությունից ազատվելու միջոց վկայակոչելու իր հետ այլ պայմանագրային հարաբերություններում գտնվող Մատակարարի կողմից պարտավորության չկատարման փաստը, քանի որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներով կոնտրագենտի կողմից պարտավորությունը չկատարելու փաստը չի դիտարկել որպես անհաղթահարելի ուժ: Բացի այդ, Գնորդը կարող էր ազատվել պատասխանատվությունից բացառապես այն դեպքում, եթե հիմնավորեր խնդրո առարկա անհաղթահարելի ուժի առկայությունը, որը սույն պարագայում ընդհանրապես չի իրականացվել:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Գնորդը պարտավոր էր փնտրել այլ մատակարարներ, ապա նշված պահանջը Գնորդի համար չի կարող պարտադիր համարվել, քանի որ այն կհակասեր կողմերի ինքնավարությանը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ մասնավոր գործերին կամայական միջամտության արգելքի սկզբունքին (3-րդ հոդվածի 1-ին մաս):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Վերոգրյալ իրավական նորմը կիրառելով խնդրի փաստական հանգամանքների նկատմամբ՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում 60-օրյա և ավելի ժամկետով կետանցը, մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող պահանջը և վճարային պարտավորության անվիճելի լինելու փաստերն առկա են, ու Պատվիրատուն իրավունք ունի Գնորդին սնանկ ճանաչելու պահանջով դիմել ՀՀ սնանկության դատարան:

## **Խնդիր 5.**

### **Պատասխան /Հարց 1/.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 677-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով՝ վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի և վաճառողի ընտրության համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձատուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 684-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձակալն իրավունք ունի գույքի որակի ու կոմպլեկտայնության, դրա մատակարարման ժամկետները խախտելու և վաճառողի կողմից պայմանագիրն անպատշաճ կատարելու դեպքերում անմիջականորեն վաճառողին ներկայացնել նրա և վարձատուի միջև կնքված առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներ: Ընդ որում, վարձակալը ձեռք է բերում գնորդի համար սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և կրում է նրա պարտականությունները, բացի վաճառողի հետ առուվաճառքի պայմանագիրն առանց վարձատուի համաձայնության լուծելու իրավունքից ու ձեռք բերված գույքի համար վճարելու պարտականությունից: Վարձակալը և վարձատուն վաճառողի հետ հարաբերություններում համիրավ պարտատերեր են (հոդված 365):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսական վարձակալության պայմանագրով, վարձատուն վարձակալի առջև պատասխանատվություն չի կրում առուվաճառքի պայմանագրից բխող պահանջները վաճառողի կողմից չկատարելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ վաճառող ընտրելու պատասխանատվությունը դրված է վարձատուի վրա: Վերջին դեպքում վարձակալն իրավունք ունի իր ընտրությամբ առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներն անմիջականորեն ներկայացնել ինչպես գույքը վաճառողին, այնպես էլ վարձատուին, որոնք համապարտ պատասխանատվություն են կրում վարձակալի առջև:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 491-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վաճառողն ապրանքի թերությունների մասին նախապայման չի սահմանել, ապա գնորդը, ում հանձնված է անպատշաճ որակի ապրանքը, իրավունք ունի վաճառողից, իր ընտրությամբ, պահանջել՝

- 1) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.
- 2) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.
- 3) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ) գնորդն իրավունք ունի, իր ընտրությամբ՝

1) հրաժարվել առուվաճառքի պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.

2) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը՝ պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով:

Տվյալ դեպքում Լիզինգի Պայմանագրով Ավտոմեքենայի վերջնական ընտրությունը, ըստ էության, դրվել է Վարկային Կազմակերպության վրա՝ անկախ այն հանգամանքից, որ ի սկզբանե այդպիսի Ապրանքը ձեռքբերելու վերաբերյալ ցուցումը տրված է եղել Հաճախորդի կողմից: Ուստիս խնդրո առարկա պարագայում հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոգրյալ կարգավորումները՝ ավտոմեքենայի ընտրության պարտականությունը կրել է Վարկային Կազմակերպությունը, հետևաբար այդ փաստի ուժով Վաճառողի հետ Հաճախորդի առջև կրել է համապարտ պատասխանատվություն:

Ավելին՝ կարելի է պնդել, որ Լիզինգի Պայմանագրի կնքման պահին Վարկային Կազմակերպությունն իրավասու էր անմիջապես մերժել Հաճախորդի ցուցումները՝ հաշվի առնելով այն, որ վերջինիս չի տիրապետում Ավտոմեքենայի որակին ներկայացվող բավարար գիտելիքների, իսկ Վարկային Կազմակերպությունը, որպես արհեստավարժ սուբյեկտ, կարող էր ավտոմեքենայի ընտրությունն իրականացնել համապատասխան ողջախոհություն դրսևորելով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ թե՛ Վաճառողը, թե՛ Վարկային կազմակերպությունը Հաճախորդի առջև կրում են համապարտ պատասխանատվություն՝ Հաճախորդն իրավունք ունի Վաճառողի կողմից Առուվաճառքի Պայմանագրից բխող Ավտոմեքենայի որակի թերությունների շտկման հետ կապված պահանջների չկատարման համար պատասխանատվության կանչել Վարկային Կազմակերպությանը, որը հետագայում գրկված չի լինելու Վաճառողի նկատմամբ հետագարձ պահանջ ներկայացնելու հնարավորությունից:

Բացի այդ, Հաճախորդը կարող է պահանջ ներկայացնել ինչպես անպատշաճ որակի Ավտոմեքենան փոխարինելուն պարտավորեցնելու, այնպես էլ իր կրած ծախսերը հատուցելու վերաբերյալ:

## **Պատասխան /Հարց 2/.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ սույն օրենսգրքի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով: Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների

հետևանքով: Նման դեպքերում առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում են աղբյուրն ապօրինի տիրապետած անձինք: Աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առավել վտանգի աղբյուրների սեփականատերերը, սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմունքներով, համապարտ պատասխանատվություն են կրում այդ աղբյուրների փոխներգործության (տրանսպորտային միջոցների բախում և այլն) հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասի համար: Առավել վտանգի աղբյուրների փոխներգործության հետևանքով նրանց սեփականատերերին պատճառված վնասը հատուցվում է ընդհանուր հիմունքներով (հոդված 1058):

Տվյալ դեպքում Հաճախորդը Կ. Մանասյանին վնասը պատճառել է ավտոմեքենայով, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված դրույթների ուժով համարվում է առավել վտանգի աղբյուր, հետևաբար այս պարագայում Հաճախորդը պատասխանատվություն կկրի առավել վտանգի աղբյուրով անձին վնաս պատճառելու կանոններով: Վերոգրյալից բխում է, որ Հաճախորդը կարող է ազատվել անձի առողջությանը պատճառված վնասը հատուցելու պատասխանատվությունից, եթե ապացուցի անհաղթահարելի ուժի կամ տուժողի՝ Կ. Մանասյանի դիտավորության առկայությունը: Խնդրի փաստական հանգամանքներից բխում է, որ մատնանշված հանգամանքներից որևէ մեկը առկա չէ, ավելին՝ չնայած Ավտոմեքենան ունեցել է որոշակի թերություններ, սակայն Հաճախորդը երթնեկել է սահմանված արագության գերազանցմամբ:

Տվյալ պարագայում վնասի հատուցման կանոններից ելնելով՝ ակնհայտ է, որ Կ. Մանասյանի առողջությանը վնասը պատճառվել է հենց Հաճախորդի ոչ իրավաչափ գործողություններով, և առկա է ուղղակի պատճառահետևանքային կապ Հաճախորդի գործողությունների ու Կ. Մանասյանի առողջությանը պատճառված վնասի միջև: Վարկային Կազմակերպությունը և/կամ Վաճառողը չեն կրի պատասխանատվություն սույն խնդրի պարագայում այն պարզ պատճառով, որ վնասը վերջիններին կողմից չի պատճառվել: